

**1.4.2. Բնակչության դրամական եկամուտներ ու ծախսեր, աշխատավարձ և այլ եկամուտներ**

**Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը:** Բնակչության դրամական եկամուտները 2002թ. հունվար-օգոստոսին կազմել են 478303.7 մլն.դրամ, իսկ դրամական ծախսերը՝ 479352.7 մլն.դրամ: Դրանց աճի տեմպերը 2001թ. հունվար-օգոստոսին համեմատ կազմել են, համապատասխանաբար՝ 110.3 և 109.8%:

**Դրամական եկամուտների օգտագործումը**

	2001		2002		
	հունվար-օգոստոս		հունվար-օգոստոս		
	մլն.դրամ	տեսակարար կշիռը եկամուտներում, %	մլն.դրամ	տեսակարար կշիռը եկամուտներում, %	տեսակարար կշռի տոկոսային փոփոխություն
<b>Դրամական եկամուտներ որից օգտագործվել է՝</b>	<b>433489.0</b>	<b>100</b>	<b>478303.7</b>	<b>100</b>	<b>-</b>
ապրանքների գնման և ծառայությունների վճարման համար	378256.7	87.2	434292.8	90.8	+3.6
պարտադիր վճարումների և կամավոր մուծումների համար	18543.7	4.3	23097.5	4.8	+0.5
ավանդների և արժեթղթերի ձևով խնայողությունների հավելած	9037.5	2.1	-11280.5	-2.4	-4.5
այլ ծախսեր	30632.3	7.1	33242.9	7.0	-0.1
<b>Դրամական ծախսեր, ընդամենը</b>	<b>436470.2</b>	<b>-</b>	<b>479352.7</b>	<b>-</b>	<b>-</b>
Դրամի աճ (+) կամ նվազում (-) բնակչության ձեռքին	-2981.2	-0.7	-1049.0	-0.2	+0.5

**Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները:** Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները՝ հանած պարտադիր վճարումները, հաշվի առած սպառողական գների ինդեքսների փոփոխությունները) 2002թ. հունվար-օգոստոսին 2001թ. հունվար-օգոստոսի նկատմամբ աճել են 8.3%-ով:

**Աշխատանքի վարձատրություն:** 2002թ. հունվար-օգոստոսին, ըստ յուրաքանչյուր ամիս վիճակագրական հաշվետվություն ներկայացնող մոտ 9000 սուբյեկտների հաշվետվությունների նախնական տվյալների գնահատման, զբաղվածների միջին անվանական աշխատավարձը կազմել է 25454 դրամ և 2001թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ ավելացել 10.9%-ով: Ընդ որում, բյուջետային կազմակերպություններում զբաղվածների աշխատավարձը, որի գնահատումը կատարվել է մոտ 4000 բյուջետային կազմակերպություններից ստացվող եռամսյակային հաշվետվությունների օպերատիվ տվյալների հիման վրա, կազմել է 15609 դրամ և 2001թ. նույն ժամանակաշրջանի համեմատ՝ ավելացել 9.4%-ով, իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում զբաղվածներինը՝ համապատասխանաբար՝ 34332 դրամ և աճել՝ 13.9%-ով:

**Անվանական միջին աշխատավարձի փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ և տատանումն ըստ տնտեսության ճյուղերի 2002թ. հուլիսին**

	Անվանական միջին աշխատավարձը, դրամ		% -ով ընդամենի նկատմամբ		% -ով նախորդ տարվա նկատմամբ	
	հուլիս	հունվար-հուլիս	հուլիս	հունվար-հուլիս	հուլիս	հունվար-հուլիս
<b>Ընդամենը</b>	26421	25298	100	100	112.0	110.7
Արդյունաբերություն	43209	39261	163.5	155.2	120.5	119.8
Գյուղատնտեսություն	20402	18995	77.2	75.1	118.2	110.1
Անտառտնտեսություն	15952	10951	60.4	43.3	157.1	104.9
Տրանսպորտ	42019	42964	159.0	169.8	98.6	106.0
Կապ	53197	52886	201.3	209.1	114.8	116.8
Շինարարություն	46840	43695	177.3	172.7	110.9	111.0
Առևտուր, հանրային սնունդ	17760	18517	67.2	73.2	166.2	172.8
Բնակարանային-կոմունալ տնտեսություն, կենցաղսպասարկում	38717	33359	146.5	131.9	141.1	124.2
Առողջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովություն	13163	12822	49.8	50.7	104.6	102.0
Կրթություն	14191	13738	53.7	54.3	106.6	107.8
Մշակույթ	11405	11010	43.2	43.5	103.4	106.6
Արվեստ	12436	12200	47.1	48.2	107.0	100.8
Գիտություն և գիտական սպասարկում	20943	20517	79.3	81.1	123.5	113.1
Վարկավորում և ապահովագրություն	77733	85968	294.2	339.8	98.2	95.8
Կառավարման ապարատ	37668	37402	142.6	147.8	107.4	112.7
Այլ	24376	24852	92.3	98.2	102.0	105.4

2002թ. հուլիսին սոցիալական ոլորտի ճյուղերում զբաղվածների անվանական միջին աշխատավարձը տատանվել է ընդհանուր միջինի 43.2%-ից (մշակույթ) մինչև 53.7%-ի (կրթություն) սահմաններում: Վարկավորման համակարգում անվանական միջին աշխատավարձն ընդհանուր միջինին գերազանցել է 2.9 անգամ, կապի համակարգում՝ 2.0, շինարարության մեջ՝ 1.8, արդյունաբերության մեջ՝ և տրանսպորտում՝ 1.6, բնակարանային-կոմունալ և բնակչության կենցաղսպասարկման ոլորտում՝ 1.5, կառավարման համակարգում՝ 1.4 անգամ: